ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

23 սեպտեմբերի 2013 թվականի թիվ 109 - Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶՊԵՏԻ 2009 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 13-Ի N 38-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ՀԱՎԵԼՎԱԾՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <Իրավական ակտերի մասին> Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 2-րդ ենթակետերով և Հայաստանի Հանրապետության նախագահի 1997թ. մայիսի 6-ի <Հայաստանի Հանրապետության մարզերում պետական կառավարման մասին> ՆՀ-728 հրամանագրի 1.6 կետով,հիմք ունենալով Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզպետի 2013թ. հուլիսի 25-ի <Հայաստանի հանրապետության Տավուշի մարզպետարանի հաստիքացուցակում լրացում և փոփոխություն կատարելու մասին> թիվ 84-Ա որոշումը՝

ո ր ո շ ու մ եմ.

1.Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզպետի 2009թ. մայիսի 13-ի <Հայաստանի հանրապետության Տավուշի մարզպետարանի աշխատակազմի կառուցվածքային ստորաբաժանումների կանոնադրությունները հաստատելու մասին> թիվ 38-Ա որոշմամբ հաստատված գյուղատնտեսության և բնապահպանության վարչության կանոնադրության մեջ /հավելված 6/ կատարել հետևյալ փոփոխությունը.

1) Հավելվածի III-րդ մասի 1-ին կետի <Վարչությունը կազմված է գյուղատնտեսության խմբից և բնապահպանության խմբից > բառերը փոխարինել < Վարչությունը իր կազմում ունի բնապահպանության բաժին > բառով.

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Ա. ՂՈՒԼԱՐՅԱՆ

2013թ. սեպտեմբերի 23
ք.Իջևան